

Կ-159⁴-28.11.2012-ՏՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 2.** Սույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարում են ԱԱՀ վճարող համարվող և (կամ) ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 3.** ԱԱՀ վճարող է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը, օտարերկրյա կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մասնաճյուղը կամ անհատ ձեռնարկատերը՝

1) տվյալ օրացուցային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը, եթե անձը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ օրենքի համաձայն չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք ունեցող ոչ առևտրային կազմակերպությունների, որոնք ԱԱՀ վճարող են համարվում սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքում և կարգով,

2) օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը ԱԱՀ-ի շեմը գերազանցելու պահից՝ մինչև օրացուցային տարվա ավարտը: Օրացուցային տարվա ընթացքում ԱԱՀ-ի շեմը գերազանցվելու դեպքում ԱԱՀ վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից,

3) օրացուցային տարվա այն պահից մինչև տվյալ օրացուցային տարվա ավարտը, որ պահից անձը օրենքի համաձայն տվյալ օրացուցային տարում դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող.

4) ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից՝ մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված շրջանառության հարկ վճարող համարվելու համար ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման իրացման շրջանառության չափը սույն օրենքի կիրառման առումով համարվում է ԱԱՀ-ի շեմ:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ ԱԱՀ-ի շեմը կիրառվում է սույն օրենքի 3.1-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում և 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերում: Սույն պարբերությունում նշված գործարքների մասով ԱԱՀ-ի պարտավորության մեծությունը որոշվում է՝

ա. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառությունից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը,

բ. գույքի մատակարարման կամ ծառայության մատուցման գործարքի ընդհանուր հարկվող շրջանառության և ընթացիկ տարվա սկզբից իրականացրած՝ բոլոր գործարքների ընդհանուր հարկվող շրջանառության հանրագումարի՝ ԱԱՀ-ի շեմը գերազանցող գումարից, եթե անձի իրականացրած՝ ապրանքի մատակարարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների ընդհանուր շրջանառությունը նախորդ տարում չի գերազանցել ԱԱՀ-ի շեմը:

Հոդված 3. Օրենքը 3-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-րդ հոդվածով.

«**Հոդված 3.1.** Սույն օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնելու դեպքում ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրում են՝

1) ձեռնարկատիրական գործունեություն վարելու իրավունք չունեցող իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, այդ թվում՝ հիմնարկները, օտարերկրյա կազմակերպությունների ներկայացուցչությունները.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում՝ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինները, այդ մարմինների ստեղծած հիմնարկները.

3) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, եթե՝

ա. նրանց իրականացրած գործարքները, սույն օրենքի համաձայն, համարվում են ապրանքի մատակարարում.

բ. մատուցել են այնպիսի ծառայություններ, որոնց իրականացումը օրենքի համաձայն չի դիտվում որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն,

գ. նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է օրենքով սահմանված չափերը:

Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կարող է դրվել այլ անձանց վրա կամ սահմանվել համապարտ պարտավորություն՝ այլ անձի կամ անձանց խմբի կողմից իրականացված գործարքից առաջացած՝ ավելացված արժեքի հարկի պարտավորության կատարման մասով:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:

Ապրանքի մատակարարում չի համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողական նպատակներով օգտագործման ենթակա)՝ անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույքի (այդ թվում՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, անձնական օգտագործման ավտոմեքենայի) և ֆիզիկական անձանց կողմից գույքային իրավունքների օտարման տնտեսական գործունեություն համարվող գործարքը, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացրած գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում.

ա. ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կամ գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարումը,

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

գ. իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ֆիզիկական անձի կողմից շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) ներդրումը, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը օտարվել է այլ անձի,

դ. օրենքով սահմանված կարգով որպես բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր հանդիսացող՝ անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների, անհատական բնակելի տների օտարումը (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների), բացառությամբ՝ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների ընդհանուր մակերեսի մինչև տասը տոկոսի, սակայն ոչ ավելի, քան 500 քառակուսի մետր մակերեսի, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ մինչև 4 անհատական բնակելի տների օտարումը:

Անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց համար սույն կետում նշված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի պարզեցված հաշվարկների ներկայացման և գումարների վճարման կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սույն կետը կիրառվում է նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե սույն կետում նշված գույքը չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության առարկա:

Անկախ սույն կետի դրույթներից՝ ֆիզիկական անձանց պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը ապրանքի մատակարարում չի համարվում:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետ.

«5) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացնելու համար որպես ներդրում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը, եթե համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին հայտարարություն հարկային մարմին չի ներկայացվել: Սույն կետում նշված դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան:»,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքի դրույթների կիրառման առումով գործարք է դիտվում որոշակի մեկ տեսակի ապրանքի օտարումը կամ մեկ տեսակի ծառայության մատուցումը՝ այն քանակով կամ ծավալով, որը իրականացվում է մեկ առաքմամբ կամ գնորդին մեկանգամյա հանձնումով (գնորդի կողմից ընդունմամբ): Ընդ որում՝ որպես մեկ առաքմամբ մատակարարված ապրանքի քանակ կամ մեկ հանձնումով ծառայության մատուցման ծավալ ընդունվում է հաշվարկային փաստաթղթում, իսկ դրա բացակայության դեպքում վճարային փաստաթղթում,

ընդունման-հանձնման կամ կատարողական ակտում կամ այլ փաստաթղթում արձանագրված քանակությունը (ծավալը)»:

Հոդված 5. Օրենքի 6.1-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն մասով սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը, իսկ հարկ վճարողի կողմից տույժերը հաշվարկված լինելու դեպքում՝ դրա նկատմամբ հսկողությունը իրականացնում է հարկային մարմինը: Մաքսային մարմնների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ, իսկ սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես հարկային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:»,

2) 4-րդ մասը «Ժամանակաշրջանում» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետում «իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում՝ սեփականաշնորհման) բառերը փոխարինել « իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անձին պատկանող բաժնեմասի և փայի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի փոխանցումը» բառերով,

2) ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը,

3) 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-րդ կետ.

«9.1) պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.»,

4) 10-րդ կետում «օտարումը պետությանը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հողամասից կանոփին հրաժարվելու դեպքում քաղաքացու կամ իրավաբանական անձի հողամասը որպես համայնքային սեփականություն՝ համայնքին, կամ որպես պետական սեփականություն՝ պետությանը փոխանցելու գործարքները.»,

5) 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-րդ կետ.

«10.1) հողամասի, այլ անշարժ գույքի փոխանակության գործարքները, երբ գործարքի կողմ է հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը.»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 3-րդ կետում «դրանց վերամշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց), իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը» բառերը փոխարինել «ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերության, օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված մաքսատուրքի և ակցիզային հարկի հանրագումարը» բառերով,

2) 4-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«4) Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված (չհաշվառված) օտարերկրյա անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարք իրականացվելու (ներառյալ՝ այդ անձի սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծվելու)

դեպքերում այդ գործարքների մասով պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող՝ ԱԱՀ վճարող համարվող կամ ԱԱՀ-ի վճարման պարտավորություն կրող անձինք, բացառությամբ արտոնագրային կամ հաստատագրված վճար կամ շրջանառության հարկ վճարող անձանցից և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից, օտարերկրյա անձանց փոխարեն որպես հարկային գործակալ կրում են ավելացված արժեքի հարկ հաշվարկելու և վճարելու պարտավորություն՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով: Սույն կետի կիրառման իմաստով գործարքը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած, եթե ապրանքի մատակարարման կամ ծառայության մատուցման վայրը Հայաստանի Հանրապետությունում է: Սույն հոդվածին համապատասխան, օտարերկրյա անձի փոխարեն ԱԱՀ-ի պարտավորություն կրելիս ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում:»:

3) 5-րդ կետի՝

ա. երկրորդ պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կոմիսիոների և գործակալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքի կամ ծառայության ընդհանուր արժեքով նաև այն դեպքերում, երբ կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերին համապատասխան, կոմիսիոների կամ գործակալի կողմից երրորդ անձից ձեռք բերված ապրանքը կամ ծառայության արդյունքը հանձնվում է համապատասխանաբար՝ կոմիտենտին կամ պրինցիպալին:»,

բ. երկրորդ պարբերությունում «հանձնարարության» բառը փոխարինել «կոմիսիայի» բառով,

գ. երրորդ պարբերությունում «սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ ֆիզիկական անձի այն գույքի օտարման գործարքների դեպքում, որոնց օտարումը, համաձայն օրենքի, ԱԱՀ-ով հարկվող գործարք չի համարվում» բառերը փոխարինել «ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման դեպքում, երբ իրականացվող գործարքը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման, այդ թվում՝ այն դեպքերում, երբ ֆիզիկական անձի գույքի օտարման գործարքը ապրանքի մատակարարում չի համարվում» բառերով,

4) 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե հրապարակային պայմանագրի համաձայն, ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձը հրապարակային պայմանագրով առևտրային գեղչերի կիրառման օրվանը նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ առևտրային գեղչեր կիրառելու վերաբերյալ:»,

5) ուժը կորցրած ճանաչել 12-րդ կետը,

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13-րդ կետ.

«13) արտարժույթի առուվաճառքի գործունեության մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը:»:

Հոդված 8. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Այն դեպքերում, երբ անձը օրենքի խախտմամբ իրեն չի համարել ԱԱՀ վճարող կամ ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ով հարկվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում ԱԱՀ-ի գումարի առանձնացում չի կատարել կամ հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել և միաժամանակ նշված դեպքերում ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի գումարը չի արտացոլել ԱԱՀ-ի հաշվարկի համապատասխան տողերում, ապա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ:»:

Հոդված 9. Օրենքի 11-րդ հոդվածում «հաստատագրված վճարումներ» բառերը փոխարինել «հարկեր կամ վճարներ» բառերով:

Հոդված 10. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 13. Բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դեպքերի, ծառայության մատուցման վայր է համարվում ծառայություն մատուցող կազմակերպության պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը կամ կազմակերպության մշտական ստորաբաժանման գտնվելու վայրը, եթե ծառայությունները մատուցվում են անմիջականորեն այդ ստորաբաժանման միջոցով, իսկ ծառայությունը անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատուցվելու դեպքում՝ նրա բնակության վայրը:»:

Հոդված 11. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության տարածքում սկսվող՝ բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների տրանսպորտային փոխադրումների մասով տրանսպորտային ծառայությունների մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, եթե ծառայություն մատուցող անձի կողմից փոխադրման ծառայությունը ավարտվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:»:

2) չորրորդ պարբերությունում «այն վայրը, որտեղ ծառայություն ստացող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ ունի մշտական հաստատություն, որին մատուցվում են նշված ծառայությունները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը» բառերը փոխարինել «ծառայություն ստացող կազմակերպության պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը կամ կազմակերպության մշտական ստորաբաժանման գտնվելու վայրը, եթե ծառայությունները ստացվում են անմիջականորեն այդ ստորաբաժանման միջոցով, իսկ ծառայությունը անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստացվելու դեպքում՝ նրա բնակության վայրը» բառերով,

3) ուժը կորցրած ճանաչել նախավերջին պարբերությունը:

Հոդված 12. Օրենքի 15-րդ հոդվածի 34-րդ կետում՝

1) «գույքի ներդրումը.» բառերը փոխարինել «սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության «գ» կետում չնված գույքի ներդրումը:» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերության «գ» ենթակետում նշված գույքի ներդրումը ազատվում է ԱԱՀ-ից, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը չի օտարվել այլ անձի:»:

Հոդված 13. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի երկրորդ պարբերությունում «կարգով» բառը փոխարինել «դեպքերում և կարգով» բառերով,

2) վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների կողմից ձեռքբերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում և ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման և (կամ) վերադարձման օրենքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:»:

Հոդված 14. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«Տնտեսավարող սուբյեկտի գործունեության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված՝ հարկային հաշիվը կարող է դուրս գրվել նախորոք՝ պայմանով, որ ապրանքները պետք է մատակարարվեն կամ ծառայությունները պետք է մատուցվեն հարկային հաշվում նշված՝ համապատասխան օրը:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում մատակարարի անունից հարկային հաշվի դուրսգրումը սույն մասով սահմանված ժամկետում կատարելու անհնարինության դեպքում, հարկային հաշիվը դուրս է գրվում մատակարարի կողմից ապրանքի կամ ծառայության արժեքի վերաբերյալ ներկայացված հաշվարկային կամ վճարային փաստաթուղթը փաստացի ստանալու օրը:

Սահմանված կարգով անվավեր ճանաչված հարկային հաշիվների փոխարեն նոր հարկային հաշիվները դուրս են գրվում նախկինում դուրս գրված հարկային հաշիվները անվավեր ճանաչելու օրը:»,

2) երրորդ պարբերությունից հանել «կամ պետական կառավարչական հիմնարկներին» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«Հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերով ապրանքներ մատակարարելիս կամ ծառայություններ մատուցելիս հանձնակատարի կամ գործակալի կողմից համապատասխանաբար հանձնարարողի կամ պրինցիպալի անունից կարող են դուրս գրվել հարկային հաշիվներ, եթե հանձնակատարին կամ գործակալին տրվել է հարկային հաշիվներ դուրս գրելու լիազորագիր: Հանձնակատարի կամ գործակալի կողմից դուրս գրվող՝ ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման գործարքին վերաբերող հարկային հաշիվներում, բացի դուրս գրողի տվյալներից, լրացվում են հանձնարարողին կամ պրինցիպալին վերաբերող այն տվյալները, որոնք պարտադիր են մատակարարի համար՝ հարկային հաշիվների լրացման դեպքերում: Այդ հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները սահմանված կարգով ներկայացվում են հանձնարարողի կամ պրինցիպալի կողմից:

Համատեղ գործունեության պայմանագրով համատեղ գործունեության գործերի վարումը օրենքով սահմանված կարգով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն ստանձնած մեկ մասնակցի կողմից իրականացվելու դեպքում համատեղ գործունեության շրջանակներում իրականացված գործարքների մասով հարկային հաշիվները դուրս են գրվում հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորություն ստանձնած անձի կողմից:

Համատեղ գործունեության պայմանագրով մեկից ավելի անձի կողմից գործերի վարում նախատեսված լինելու դեպքում համատեղ գործունեության մասով իրականացված գործարքների մասով առանձին մասնակցի կողմից հարկային հաշիվներ կարող է դուրս գրվել հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունով, համատեղ գործունեության բոլոր մասնակիցների համապատասխան գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Հանձնարարության, պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության կամ համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում համապատասխանաբար հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունով հարկային հաշիվներ դուրս են գրվում առնվազն 3 օրինակից, որի 1 օրինակը պարտադիր տրամադրվում է այն անձին, ում անունով այդ հաշիվները դուրս են գրվել: Հանձնարարողի, պրինցիպալի կամ հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնած անձի անունով դուրս գրված հարկային հաշիվները սույն օրենքի դրույթների կիրառման առումով համարվում են մատակարարի կողմից դուրս գրված:»:

Հոդված 15. Օրենքի 19-րդ հոդվածում «հաստատագրված» բառից առաջ լրացնել «շրջանառության հարկով, արտոնագրային վճարով կամ» բառերը:

Հոդված 16. Օրենքի 20-րդ հոդվածի վեցերորդ պարբերությունում «հաշվետու ժամանակաշրջանի» և «հաշվետու ժամանակաշրջանում» բառերը փոխարինել, համապատասխանաբար՝ «եռամսյակի» և «եռամսյակի ընթացքում» բառերով և պարբերությունը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տեղեկանք ներկայացնում են նաև անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձինք, եթե նրանց կողմից տվյալ եռամսյակում իրականացվել է ապրանքի մատակարարում համարվող գործարք և այդ գործարքին վերաբերող ձեռքբերումների մասով կատարվում է հաշվանցում և (կամ) դուրս է գրվել հարկային հաշիվ:»:

Հոդված 17. Օրենքի 22-րդ հոդվածում «երեք» բառերը փոխարինել «հինգ» բառերով:

Հոդված 18. Օրենքի 23-րդ հոդվածում՝

- 1) 1-ին կետի երկրորդ պարբերությունում «կտրոններում» բառից առաջ լրացնել «ֆիսկալային» բառը,
- 2) 3-րդ կետի՝

ա. առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքով սահմանված կարգով կոմիսիոների կամ գործակալի կողմից հաշվանցման ենթակա են կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերին համապատասխան, կոմիտենտին կամ պրինցիպալին հանձնելու համար ձեռք բերված ապրանքին կամ ծառայությանը վերաբերող՝ երրորդ անձից ստացված հարկային հաշիվներում առաձնացված ԱԱՀ-ի գումարները:»:

բ. երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքին համապատասխան ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ առկա կամ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (առանց գերավճարի և գերավճարից տարբերվող գումարների) ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման և վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին: Արտադրության և շրջանառության ծախսերին վերագրված գումարի մեծության վերաբերյալ հարկ վճարողը ԱԱՀ վճարող չհամարվելու օրվանը, իսկ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում ԱԱՀ-ի դեբետային մնացորդ առաջանալու դեպքերում՝ դրա առաջացման օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացնում է հարկային մարմնին: Նշված ժամկետում գրավոր տեղեկացում չստանալու դեպքում ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հարկային մարմնի կողմից հանվում է հաշվառումից և կարող է գերավճարի կամ գերավճարից տարբերվող գումարի չափով վերականգնվել, եթե այդ չափը հիմնավորվում է հարկ վճարողի կողմից ներկայացված համապատասխան գրությամբ կամ ստուգման արդյունքներով:

ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը հաշվարկելիս հաշվի են առնվում վճարող համարվելուց դադարելու օրվա դրությամբ հարկ վճարողի մոտ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը, այդ ժամանակաշրջանում սույն օրենքով սահմանված դեպքերում ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով պետական բյուջե վճարման կամ հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները, ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում կատարված ԱԱՀ-ի վճարումները:»,

- 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասեր.

«Սույն օրենքով սահմանված կարգով հաշվանցումներ կատարում են նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ սույն օրենքի համաձայն ապրանքների մատակարարում համարվող գործարքների մասով պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկելիս:

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր հան-

դիսացող (այսուհետ հոդվածում՝ կառուցապատող)՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների, անհատական բնակելի տների օտարման դեպքերում սույն օրենքի համաձայն ապրանքների մատակարարում համարվող գործարքների մասով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցվող գումարները որոշվում են կառուցապատված տարածքի ընդհանուր մակերեսում օտարվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռից ելնելով:»:

Հոդված 19. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 24.1-րդ հոդվածը:

Հոդված 20. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետում՝

ա. առաջին պարբերությունում «ազատված» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ արտոնագրային վճարով կամ հաստատագրված վճարով կամ շրջանառության հարկով հարկվող» բառերը,

բ. երկրորդ պարբերությունում «հաստատագրված վճարումներ կատարողների» բառերը փոխարինել «հարկեր կամ վճարներ վճարողների» բառերով,

գ. երրորդ պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն մասին համապատասխան վերաձևակերպումներ չեն կատարվում այն դեպքերում, երբ գործարքներն իրականացվում են այն անձի կողմից, որը դադարել է համարվել ԱԱՀ վճարող:»,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն մասի կիրառման նպատակով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ գույքի հաշվեկշռային արժեքը կամ ամորտիզացիայի գումարը որոշվում է ելնելով՝

ա. տվյալ հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկող տարվա հունվարի 1-ի դրությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի այդ խմբի հաշվեկշռային արժեքից կամ շահագործման ժամկետ ունեցող գույքի այդ խմբի ընդհանուր ամորտիզացիայի տարեկան գումարից՝ դրանց նկատմամբ կիրառելով շահագործման ժամկետ ունեցող գույքի սկզբնական արժեքների հանրագումարում շահագործման ժամկետ ունեցող տվյալ գույքի սկզբնական արժեքի տեսակարար կշիռից, և

բ. ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկող ամիսների թվի և մեկ տասներկուերորդի արտադրյալից:»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետ.

«7) առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեության իրականացման համար համատեղ գործունեության մասնակցի կողմից կատարվող ներդրումներին վերաբերող՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարները, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված դեպքի: Սույն կետին համապատասխան հաշվանցման ոչ ենթակա ԱԱՀ-ի այն գումարները, որոնք նախկինում հաշվանցվել են՝ վերաձևակերպվում և նվազեցում են հաշվանցվող գումարներից այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է ներդրումը:»:

Հոդված 21. Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 27.** Եթե սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ (ներառյալ՝ ԱԱՀ-ից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող, հաստատագրված կամ արտոնագրային վճարներով կամ շրջանառության հարկով հարկվող գործարքներ, ինչպես նաև այնպիսի գործարքներ, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի գործողությունը), ապա՝

1) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարից կարող են հաշվանցել (պակասեցնել) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների (ձեռք բերված ապրանքների (բացառությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի),

ստացված ծառայությունների՝ այսուհետ սույն հոդվածում՝ ձեռքբերումների) հարկային հաշիվներում, օրենքով սահմանված չափի սահմաններում հսկիչ-դրամարկային մեքենաների ֆիսկալային կտրոններում կամ կրճատ հաշիվ ապրանքագրերում (այսուհետ սույն հոդվածում՝ հարկային հաշիվներում), ապրանքների (բացառությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի) ներմուծման մաքսային հայտարարագրերում (այսուհետ՝ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված և սույն օրենքի այլ հոդվածներին համապատասխան հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի ընդհանուր գումարը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնց հաշվանցումը տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հետաձգվել է սույն օրենքի 23-րդ կամ 43.1-րդ հոդվածների հիմքով, ենթակա են հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում՝ առանց հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռը հաշվի առնելու,

2) հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա գումարներից պակասեցվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները,

3) հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին ուղղակիորեն չվերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում կամ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից պակասեցվում են հետևյալ կարգով.

ա. ձեռքբերումների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց դիմաց մատակարարներին կանխիկ վճարումները կատարվել են չպահպանելով սույն օրենքի 23-րդ հոդվածի սահմանափակումները, ամբողջությամբ պակասեցվում են վճարման հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից,

բ. ձեռքբերումների գծով այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց գծով մատակարարներին վճարումներ չեն կատարվել կամ որոնց մասով սույն օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան տեղեկություններ չեն ներկայացվել, հետաձգվում են հետագա հաշվետու ժամանակաշրջաններ՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի) հարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող չափով,

գ. սույն կետի «բ» ենթակետով սահմանված դեպքում ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող՝ ձեռքբերումների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները պակասեցվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից,

դ. սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով հետաձգված ԱԱՀ-ի գումարներին համապատասխանող գործարքների գծով հետագա հաշվետու ժամանակաշրջանում կանխիկ վճարումները սույն օրենքի 23-րդ հոդվածի սահմանափակումները չպահպանելով կատարելու դեպքում այդ գումարները ենթակա չեն հաշվանցման (այդ գումարների գծով հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպումներ չեն կատարվում),

ե. սույն կետի «բ» ենթակետով սահմանված կարգով հետաձգված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման՝ հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում՝ առանց հաշվանցման իրավունքի առաջացման հաշվետու ժամանակաշրջանում իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող կամ ԱԱՀ-ով չհարկվող գործարքների տեսակարար կշիռը հաշվի առնելու,

զ. ուղղակիորեն չվերագրվող ձեռքբերումների հարկային հաշիվներում, ինչպես նաև ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնց մասով օրենքի

20-րդ, 23-րդ և 43.1-րդ հոդվածների համաձայն առկա են հաշվանցումներ կատարելու հիմքերը, հաշվանցվում են հաշվետու ժամանակաշրջանում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր շրջանառության մեջ (առանց ԱԱՀ-ի) հարկվող գործարքների տեսակարար կշիռն համապատասխանող չափով, իսկ չհարկվող գործարքների տեսակարար կշիռով ենթակա են պակասեցման հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից:

Հոդված 22. Օրենքի 31-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ֆիզիկական անձի կողմից մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը՝ այդ ներդրմանը համապատասխանող ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը օտարվելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության «գ» կետում նշված գույքի ներդրման գործարքի մասով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում բաժնեմասի օտարման պահը:»:

Հոդված 23. Օրենքի 32-րդ հոդվածը՝

1) առաջին պարբերությունում «23 և 24 հոդվածների» բառերը փոխարինել «23-րդ և 24.2-րդ հոդվածների» բառերով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«ԱԱՀ վճարող չհամարվող անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացրած գործարքի մասով սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու դեպքերում ԱԱՀ-ի գումարները վճարվում են մինչև գործարքի իրականացմանը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:»:

Հոդված 24. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածով սահմանված ժամկետում ԱԱՀ հաշվարկներ ներկայացնում են նաև ԱԱՀ վճարող չհամարվող անձինք՝ օրենքի համաձայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու կամ ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում հարկային հաշվի վերաբերյալ նախկինում չներկայացված տեղեկությունները ներկայացնելու, ձեռքբերված ապրանքների կամ ստացված ծառայությունների դիմաց վճարում կատարելու արդյունքում հաշվանցման ենթակա գումար առաջանալու դեպքերում:»:

Հոդված 25. Օրենքի 34-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 34.** Ջրոսաշրջության գործունեության մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից վճարվող գումարի: Օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաները իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:»:

Հոդված 26. Օրենքի 35-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 35.** Մեկից ավելի անձանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի չենը կիրառվում է մեկ անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից կամ այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից: ԱԱՀ-ով հարկման (այդ թվում՝ ԱԱՀ-ի չեմի կիրառման նպատակով գույքի սեփականությունում անձին պատկանող բաժնեմասի օտարման գործարքի՝ օրենքին համապատասխան որոշվող ԱԱՀ-ով հարկվող շրջանառությանը ավելացվում է նախկինում կատարված գործարքով (գործարքներով) այդ գույքի սեփականության իրավունքում այդ անձի բաժնեմասի օտարման գործարքների ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունները: Ընդհանուր

սեփականություն հանդիսացող գույքի օտարման գործարքից առաջացող ավելացված արժեքի հարկի պարտավորության մասով գույքի սեփականությունում բաժնեմաս ունեցողները կրում են համապարտ պարտավորություն»:

Հոդված 27. Օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված էլեկտրակապի օպերատորի կամ փոստային կապի օպերատորի կողմից օտարերկրյա համապատասխան օպերատորներին մատուցվող այն ծառայությունների, որոնց մասով, համապատասխանաբար՝ էլեկտրակապի միջազգային միության (ԷՄՄ) կանոնադրությամբ կամ Համաշխարհային փոստային միության կանոնադրությամբ համապատասխան, կատարվում է միջազգային փոխկապակցման ծառայությունների շրջանակներում միմյանց մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարների փոխադարձ հաշվարկ՝ կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ»:

Հոդված 28. Օրենքի 38-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 38.** Գրավի առարկայի օտարման դեպքերում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է գրավատուն»:

Հոդված 29. Օրենքի 42-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 42.** Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված չհամարվելու ժամանաշրջանում ԱԱՀ վճարողների կողմից հարկային հաշիվներ դուրս գրելու դեպքում այդ անձանցից գանձվում է տուգանք՝ դուրս գրված հարկային հաշիվերում առանձնացված ԱԱՀ-ի գումարի տասը տոկոսի չափով»:

Հոդված 30. Օրենքի 43-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 43.** Հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակաս ցույց տալու կամ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարը ավել ցույց տալու համապատասխան դեպքերի համար հարկ վճարողից գանձվում կամ առաջադրվում է.

1) պակաս հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը,

2) ավել հաշվարկված՝ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարը,

3) պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարի և հարկ վճարողի ներկայացրած ԱԱՀ-ի հաշվարկով պետական բյուջեից հաշվանցման ներկայացված գումարի հանրագումարը, եթե հարկ վճարողի կողմից ներկայացվել է բյուջեից հաշվանցման ենթակա գումարով ԱԱՀ-ի հաշվարկ, սակայն ստուգման արդյունքներով առաջանում է պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումար:

Սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված ԱԱՀ-ի համապատասխան գումարի նկատմամբ հաշվարկվում և գանձվում է տուգանք՝

ա. 100 տոկոսի չափով, եթե փաստացի իրականացված գործարքի գծով առաջացող պարտավորությունը նվազեցնելու նպատակով գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հարկային հաշիվը հարկ վճարողի կողմից անվավեր է ճանաչվել,

բ. սույն մասի «ա» կետում չնշված դեպքերում՝ սույն հոդվածին համապատասխան հաշվարկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա գումարի 50 տոկոսի չափով, իսկ սույն կետով սահմանված տուգանքը կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն տեսակի խախտումը կրկին կատարելու դեպքում՝ տուգանք բյուջե վճարման ենթակա գումարի 100 տոկոսի չափով:

Սույն հոդվածին համապատասխան հաշվարկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա գումարները և տուգանքները հաշվարկվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ամսական ավելացված արժեքի հարկ վճարողների համար սույն հոդվածով սահմանված դրույթները (այդ թվում՝ պատասխանատվությունը) չեն կիրառվում, եթե չի ավարտվել այն եռամսյակի համար

տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետը, որն ընդգրկում է հարկային հաշվի վերաբերյալ դուրս գրման (ստացման), իսկ հաշվանցումների կատարման մասով՝ փաստացի հաշվանցման ամիսը»:

Հոդված 31. Օրենքի 43.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Տուգանքը վճարվում է հարկային մարմնի կողմից հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներառելու (չներկայացնելու) փաստն արձանագրող համապատասխան ակտը հարկային մարմնի կողմից ներկայացվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում»:

Հոդված 32. Օրենքի 44.1-րդ հոդվածում «հաստատագրված վճարով» բառերը փոխարինել «շրջանառության հարկով, արտոնագրային կամ հաստատագրված վճարով» բառերով:

Հոդված 33. Ուժը կորցրած ճանաչել օրենքի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ով հաստատված՝ ավելացված արժեքի հարկի հաշվին հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարի մեծության որոշման կարգի 16-րդ և 17-րդ կետերը:

Հոդված 34. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված՝ Օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի «բ» կետով սահմանված տուգանքի կիրառման համար 2013 թվականի հունվարի 1-ից հետո արձանագրված խախտումը դիտվում է որպես առաջին խախտում:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրերի պահպանման նվազագույն ժամկետը 2013 թվականի համար համարվում է երեք տարին, իսկ 2014 թվականի համար՝ չորս տարին:

Սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետը և սույն օրենքով սահմանված համատեղ գործունեությանը վերաբերող դրույթները ուժի մեջ են մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

Սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված և շահագործման հանձնված գույքի մասով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Շրջանառության հարկի մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
<i>«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</i>			
Հայաստանի Հանրապետության կառավարություն ՀՀ ԱԺ նախագահ Հ. Աբրահամյան	Առաջարկվում է արտադրական գործունեության մասով շրջանառության հարկի դրույքաչափը 5 տոկոսից իջեցնել 3.5 տոկոս:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «իրացումից հասույթ» բառերից հետո հանել «առանց ԱԱՀ-ի» բառերը, իսկ «58,35 մլն.դրամը» բառերը փոխարինել «70 մլն.դրամը» բառերով:	Չի ընդունվել: Առաջարկությունն, ըստ էության, խմբագրական նշանակություն ունի: Բացի այդ, նախագծով ներկայացված խմբագրությունը պահպանելն առավել նպատակահարմար է, քանի որ՝ 1) այն կիրառելի է ինչպես ԱԱՀ վճարող համարվող, այնպես էլ ԱԱՀ վճարող չհամարվող տնտեսավարող սուբյեկտների համար, 2) այն առավել հստակ է և երկիմաստ	

		մեկնաբանությունների ու տարընթերցումների պատճառ չի հանդիսանա:	
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետում նախատեսել, որ դատարանի վճռով հարկային մարմնի ղեկավարի որոշումը չեղյալ համարվելու դեպքում որոշման գործողության ժամանակաշրջանի համար կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ:	Ընդունվել է:	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն. «Անձանց փոխկապակցված ճանաչելու մասին վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշումը դատարանի վճռով չեղյալ համարվելու դեպքում որոշման գործողության ժամանակաշրջանի համար կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ:»:
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեության համար շրջանառության հարկի դրույքաչափը սահմանել 2.5 տոկոս, իսկ այլ գործունեության համար՝ 3.5 տոկոս:	Ընդունվել է մասնակի: Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի դրույքաչափը 5 տոկոսի փոխարեն սահմանվել է 3.5 տոկոս: Միաժամանակ, 1) Նախագծով ներկայացված՝ շրջանառության հարկի դրույքաչափերը, ըստ գործունեության առանձին տեսակների, որոշվել են տարեկան կտրվածքով մինչև 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի և նրանց շրջանառությունների հարաբերակցությամբ հաշվարկվող՝ հարկման արդյունավետ դրույքաչափերի հիման վրա, 2) նախագծով նախատեսված	

		է, որ շրջանառության հարկ վճարողներն ազատվում են առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռքբերումների մասով, որպես հարկային գործակալ, 11 տոկոս եկամտային հարկ վճարելու պարտավորությունից, ինչն ուղղակիորեն նշանակում է նրանց հարկային բեռի կրճատում, 3) շրջանառության հարկի համակարգի ներդրումը էականորեն կպարզեցնի հարկային հաշվառման գործընթացը, ինչը նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտները կազատվեն բարդ հարկային հաշվառում վարելու համար կատարվող ծախսերից, 4) նախագծով նախատեսված՝ շրջանառության հարկի դրույքաչափերը լիովին համադրելի են նախկինում կիրառվող պարզեցված հարկի դրույքաչափերի հետ:	
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է շրջանառության հարկի համակարգի ներդրմանը զուգահեռ պահպանել նաև հարկման ներկայիս համակարգը (միայն շահութահարկով կամ միայն եկամտահարկով)՝ որպես շրջանառության հարկի համակարգին այլընտրանք:	Չի ընդունվել: Առաջարկության ընդունումը կնշանակի տարեկան կտրվածքով մինչև 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասով կիրառել հարկման 3 տարբեր ռեժիմներ, ինչը ենթադրում է բարդ հարկային վարչարարություն:	

ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Մ. Մելքունյան	Առաջարկվում է առևտրական (առք ու վաճառքի) գործունեության համար շրջանառության հարկի դրույքաչափը սահմանել 2 տոկոս, իսկ այլ գործունեության համար՝ 3.5 տոկոս:	Ընդունվել է մասնակի: Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի դրույքաչափը 5 տոկոսի փոխարեն սահմանվել է 3.5 տոկոս: Միաժամանակ, 1) Նախագծով ներկայացված՝ շրջանառության հարկի դրույքաչափերը, ըստ գործունեության տեսակների, որոշվել են տարեկան կտրվածքով մինչև 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի և նրանց շրջանառությունների հարաբերակցությամբ հաշվարկվող՝ հարկման արդյունավետ դրույքաչափերի հիման վրա, 2) նախագծով նախատեսված է, որ շրջանառության հարկ վճարողներն ազատվում են առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռքբերումների մասով, որպես հարկային գործակալ, 11 տոկոս եկամտային հարկ վճարելու պարտավորությունից, ինչն ուղղակիորեն նշանակում է նրանց հարկային բեռի կրճատում, 3) շրջանառության հարկի համակարգի ներդրումը էականորեն կպարզեցնի հարկային հաշվառման գործընթացը, ինչը նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտները կազատվեն	
---	---	--	--

		բարդ հարկային հաշվառում վարելու համար կատարվող ծախսերից, 4) նախագծով նախատեսված՝ շրջանառության հարկի դրույքաչափերը լիովին համադրելի են նախկինում կիրառվող պարզեցված հարկի դրույքաչափերի հետ:	
ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Բաղդասարյան	Առաջարկվում է շրջանառության հարկ վճարող համարվելու համար իրացումից հասույթի թույլատրելի շեմը բարձրացնել մինչև 100 մլն. դրամ:	Չի ընդունվել: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագծով առաջարկվող շեմը շուրջ 2-3 անգամ բարձր է միջազգային պրակտիկայում կիրառվող շրջանառության հարկի շեմերից. մասնավորապես, Վրաստանում կիրառվում է 24.5 մլն. դրամին, Ուկրաինայում՝ 15 մլն. դրամին, Լատվիայում՝ 26.7 մլն. դրամին, Էստոնիայում՝ 8.5 մլն. դրամին, Լիտվայում՝ 23.9 մլն. դրամին, Մոլդովայում՝ 20 մլն. դրամին, Բուլղարիայում՝ 14 մլն. դրամին, Տաջիկստանում՝ 17 մլն. դրամին համարժեք շեմ (աղբյուրը՝ http://online.ibfd.org/kbase/ "IBFD tax research platform" IBFD is a leading provider of international tax expertise and independent research, offering online products, books, services and training.):	
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի	Առաջարկվում է նոտարական գործունեության մասով շրջանառության հարկի դրույքաչափը 20 տոկոսի փոխարեն սահմանել 12 տոկոս:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

նախագահ Վ. Այվազյան ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Բաղդասարյան			
ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Բաղդասարյան	Առաջարկվում է սահմանել շրջանառության հարկի հետևյալ դրույքաչափերը. ա. առևտրական (առք ու վաճառքի գործունեությունից) եկամուտներ - 2.5 տոկոս բ. վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի - 10 տոկոս գ. ակտիվների, այդ թվում՝ անշարժ գույքի, իրացումից եկամուտներ - 7 տոկոս դ. արտադրությունից եկամուտներ - 3 տոկոս ե. այլ գործունեությունից եկամուտներ - 4 տոկոս:	Ընդունվել է մասնակի: Արտադրական գործունեությունից ստացվող եկամուտների մասով շրջանառության հարկի դրույքաչափը 5 տոկոսի փոխարեն սահմանվել է 3.5 տոկոս:	
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածից հանել «ուղղակի» բառը:	Ընդունվել է:	Նախագծի 2-րդ հոդվածից «ուղղակի» բառը հանվել է:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մաս. «4. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով (բացառությամբ պետությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման դեպքերի) եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ շրջանառության հարկի հաշվետու ժամանակաշրջանների,	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	բաշխվում է հավասարաչափ և դրա չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:»:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասում «հավասարեցված եկամուտներից» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտներից» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «(այդ թվում՝ կանխավճարները» բառերից հետո լրացնել «, նվազագույն շահութահարկի վճարումները)» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «(իրացման շրջանառությունը)» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծով նախատեսել, որ հաշվետու տարվա որևէ ամսում ապրանքների, արտադրանքի, ծառայությունների և ակտիվների իրացումից հասույթի (զուտ հասույթը՝ առանց անուղղակի հարկերի) կամ «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ չափազրման արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերվելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք պակասորդի գնի (արժեքի) 50 տոկոսի չափով, իսկ նշյալ խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնվելու դեպքում գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 100 տոկոսի չափով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Վ. Այվազյան			
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածում հստակեցնել հաշվապահական հաշվառումը ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից սահմանված չափանիշներին բավարարող համակարգչային ծրագրերով չվարելու դեպքերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր դիտորդի կարգավիճակով մուտք գործելու հնարավորություն չտալու դեպքում 5 մլն.դրամի չափով տուգանքի կիրառման մեխանիզմը:	Ընդունվել է:	Նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածը վերախմբագրվել է, և դիտորդի կարգավիճակով ծրագիր մուտք գործելու մեխանիզմը փոխարինվել է հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծվող ֆայլի պատճեն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով տրամադրելու մեխանիզմով:
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ Աժ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածից հանել հաշվապահական հաշվառման ծրագրերի նկատմամբ ՀՀ կառավարության կողմից լրացուցիչ չափանիշներ սահմանելու և համապատասխան տուգանք կիրառելու իմպերատիվ դրույթը (կամ հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագիր վարելու չափանիշները սահմանել օրենքով), ինչպես նաև հստակեցնել 5 մլն. դրամ տուգանք կիրառելու և ծրագրեր մուտք գործելու ժամանակ հնարավոր սուբյեկտիվ մոտեցումները, մասնավորապես, հոդվածը վերաշարադրել այնպես, որպեսզի տվյալ դրույթը «զուտ» տեղեկատվության հասանելիության և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակ հետապնդի:	Ընդունվել է:	Նախագծով սահմանվել է այլ մոտեցում, որի համաձայն, կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման այնպիսի համակարգչային ծրագրերով, որոնք հնարավորություն են ընձեռում հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Միաժամանակ, դիտորդի կարգավիճակով ծրագիր մուտք գործելու մեխանիզմը փոխարինվել է հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծվող ֆայլի պատճեն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով տրամադրելու մեխանիզմով:

ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ Աժ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է հարկային մարմինների կողմից հաշվապահական հաշվառման ծրագրեր մուտք գործելու ընթացակարգն ու չափանիշները սահմանել օրենքով, ինչպես նաև հստակեցնել ծրագիր մուտք գործելու խոչընդոտման դեպքերն ու տուգանքի մեխանիզմի կիրառման եղանակները:	Ընդունվել է:	Նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածը վերախմբագրվել է, և դիտորդի կարգավիճակով ծրագիր մուտք գործելու մեխանիզմը փոխարինվել է հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծվող ֆայլի պատճեն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով տրամադրելու մեխանիզմով:
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ Աժ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածը 1 մլրդ. դրամ և ավելի շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ կիրառել 2014 թվականից, իսկ 500 մլն. դրամ և ավելի շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ՝ 2015 թվականից:	Չի ընդունվել: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ տարեկ կտրվածքով 500 մլն. դրամ և ավելի շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները հիմնականում հաշվառումը վարում են համակարգչային ծրագրերով:	
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ Աժ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.2-րդ հոդվածը կիրառել միայն պահեստում իրականացվող և ստուգման արդյունքում արձանագրված դեպքերի համար: Մասնավորապես, առաջարկվում է՝ ա) պահեստում արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերելու դեպքերի համար նախատեսված՝ կառավարության կողմից սահմանվող կարգի հիմնական չափանիշները (կատարվող գույքագրման, առաքման վայրի շրջանակները, ապրանքների միջտեսակային շարժը, բնական և այլ կորուստները) ամրագրել օրենքով, բ) օրենքով հստակ սահմանել «պահեստ» կամ «իրացման վայր» հասկացությունը, գ) 25.2-րդ հոդվածը վերաշարադրել այնպես, որպեսզի տվյալ նորմը կիրառվի միայն այն դեպքում, երբ	Ընդունվել է մասնակի: Նախագծով նախատեսվել է, որ չափագրմամբ հայտնաբերված տուգանքները կիրառվելու են միայն պատրաստի արտադրանքի մատակարարման կամ պահպանման վայրերում արձանագրվող պակասորդի նկատմամբ:	

	ավելացված արժեքի հարկ վճարողի ապրանքների, արտադրանքի, ծառայությունների և ակտիվների իրացումից հասույթը (զուտ հասույթը՝ առանց անուղղակի հարկերի) կամ «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կգերազանցի 100 մլն. դրամը:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1 հոդվածով. «Հոդված 2.1. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հարկերի դրույքաչափի փոփոխության, հարկի սահմանման կամ վերացման մասին օրենքները ուժի մեջ կարող են մտնել հաջորդ ֆինանսական տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան դրանց ընդունումից վեց ամիս հետո: Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում պետական բյուջեի հաստատման դեպքում սույն հոդվածի առաջին մասով ներկայացվող փոփոխությունները ուժի մեջ են մտնում բյուջեի հաստատման պահից, բայց ոչ շուտ, քան նշված փոփոխությունների ընդունումից վեց ամիս հետո:»:	Չի ընդունվել: Կարծում ենք, որ ներկայացված առաջարկությունը պետք է առանձին քննարկման առարկա դարձնել, քանի որ նախագծերի փաթեթով դրա ընդունումը խնդրահարույց է շրջանառության հարկը 2013 թվականի հունվարի 1-ից կիրառության մեջ դնելու առումով:	
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 15-րդ հոդվածով օրենքում լրացվող նոր՝ 25.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 25.1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվապահական հաշվառումը համակարգչային ծրագրերով վարելու պարտավորություն ունեցող կազմակերպությունների կողմից հաշվապահական հաշվառումը «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համակարգչային ծրագրերով չվարելու կամ հարկային մարմնի կողմից պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ընթացքում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով դրան հաջորդող աշխատանքային օրը սույն հոդվածով սահմանված հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճեն (ստուգման հանձնարարականով ընդգրկվող ժամանակահատվածի	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	մասով) ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով չտրամադրելու դեպքում գանձվում է տուգանք՝ ա. հինգ միլիոն դրամի չափով՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի 1 միլիարդ դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ, բ. երեք միլիոն դրամի չափով՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի 500 միլիոն դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների նկատմամբ: Սույն հոդվածով նախատեսված դեպքերում հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճեն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով տրամադրումը արձանագրվում է հանձնման-ընդունման ակտով, որը ստորագրվում է հարկ վճարողի և ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից: Սույն հոդվածով նախատեսված դեպքերում բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կամ ներդրումային ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճեն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից պահանջելու և էլեկտրոնային կրիչով նշյալ պաշտոնատար անձանց տրամադրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:		
«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
ՀՀ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Առաջարկվում է օրենքով սահմանել այն հիմնական չափանիշները, որոնց համաձայն, ՀՀ կառավարությունը հավանության է արժանացնելու գործարար (ներդրումային) ծրագրերը:	Չի ընդունվել:	Կարծում ենք, որ գործարար ծրագրերի հավանության արժանացման գործընթացը

Վ. Այվազյան ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան		առավել ձկուն ծևով կազմակերպելու համար առավել նպատակահարմար է, նշյալ չափանիշները սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ:	
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան ՀՀ ԱԺ պատգամավոր Խ. Հարությունյան	Առաջարկվում է նախագծում նախատեսել գործարար (ներդրումային) ծրագրերի հավանության արժանացնելու առավելագույն ժամկետ՝ 20 աշխատանքային օր, ինչպես նաև մշակել «պատշաճ ծանուցման» մեխանիզմ, իսկ մերժման դեպքում ներկայացնել մերժման համապատասխան հիմնավորում: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ եթե 20-օրյա ժամկետում Կառավարությունը չի պատասխանում տնտեսավարող սուբյեկտին, ապա ծրագիրը համարվում է հավանության արժանացած: Միաժամանակ, առաջարկվում է օրենքով հստակ սահմանել «նոր աշխատատեղերի ստեղծում» հասկացությունը և այն հնարավոր դեպքերը, համաձայն որոնց՝ դրանք այդպիսին պետք է ճանաչվեն կամ ոչ, այնուհետև թույլ տալ տնտեսավարող սուբյեկտներին՝ սեփական պատասխանատվությամբ ստանձնելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու և համապատասխան արտոնությունից օգտվելու ռիսկը: Առաջարկվող մեխանիզմը ենթադրում է նաև, որ հարկային մարմինները վարչարարության իրականացման ժամանակ արձանագրած անհամապատասխանությունների և չարաշահումների ժամանակ պետք է կիրառեն տուգանքներ՝ հնարավոր չարաշահումներից խուսափելու համար, իսկ տնտեսավարող սուբյեկտները պետք է իրավունք ունենան՝ դատական կարգով վիճարկելու հարկային մարմինների կայացրած որոշումները	Չի ընդունվել: 1. Գործարար ծրագրերի հավանության արժանացման կամ մերժման համար առավելագույն ժամկետ սահմանելը, կարծում ենք, նպատակահարմար չէ, քանի որ գործնականում լինում են դեպքեր, երբ հարկ վճարողները ներկայացնում են գործարար (ներդրումային) ծրագրերի ոչ լիարժեք փաթեթներ և նրանց առաջարկվում է ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր: Բացի այդ, գործարար ծրագրերը մինչև Կառավարության մակարդակում քննարկելը նախապես քննարկվում են գերատեսչական մակարդակում, ինչը լրացուցիչ ընթացակարգ է և ժամանակ է պահանջում: Այս պարագայում առավելագույն ժամկետի սահմանումը կարող է խնդրահարույց լինել: 2. Տնտեսավարող սուբյեկտին պատշաճ ծանուցման մեխանիզմի սահմանման մասով նախագծում լրացում չի կատարվել, քանի որ այն գործող օրենսդրությամբ սահմանված է:	

		3. Ինչ վերաբերում է մերժման հիմնավորումներին, ապա նախատեսվում է ՀՀ կառավարության որոշմամբ ամրագրել, որ մերժման մասին ծանուցումը տնտեսավարող սուբյեկտին ներկայացվելու է համապատասխան հիմնավորումներով: 4. Կարծում ենք, առավել նպատակահարմար է նոր աշխատատեղերի ստեղծման հետ կապված լրացուցիչ աշխատավարձի հաշվարկման կարգը սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ:	
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ «իե» ենթակետում «պարտավորությունները ստանձնելու մասին» բառերից հետո լրացնել ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) առաջին պարբերությունում «համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները» բառերը փոխարինել «համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները (ստացողի մոտ), եթե հարկային մարմին է ներկայացվել համատեղ գործունեության մասով հարկերը հաշվարկելու և վճարելու պարտավորությունները ստանձնելու մասին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված կարգով հայտարարություն, ինչպես նաև համատեղ գործունեության շրջանակներում մասնակիցների կողմից կատարված ներդրումների դիմաց ստացվող եկամուտները, եթե համատեղ գործունեությունն իրականացվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	կարգով» բառերով,»:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 1) «ժը» ենթակետը ուժը կորցրած ճանաչել, 2) «ժթ» ենթակետում «ընթացիկ» բառից հետո լրացնել «, հիմնական միջոցների սպասարկման ծախսերը» բառերը:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածում՝ 1) «դ» ենթակետում «հիմնական միջոցների» բառերը փոխարինել «ակտիվների» բառով, 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է» ենթակետ. «է) համատեղ գործունեության իրականացման նպատակով մասնակիցների կողմից կատարվող ներդրումները, ինչպես նաև համատեղ գործունեության մասով հարկերի հաշվարկման և վճարման պարտավորություն կրող անձի կողմից մասնակիցներին ներդրումների դիմաց վճարվող միջոցները, եթե համատեղ գործունեությունն իրականացվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածով սահմանված կարգով:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ա) երկրորդ նախադասությունում «Տարվա ընթացքում ձեռք բերված» բառերից հետո լրացնել «(կառուցված, մշակված)» բառերը, բ) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն մասի կիրառության իմաստով, օտարված ոչ ընթացիկ ակտիվի (բացառությամբ օտարման տարվա ընթացքում ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվի)	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան լրացում և փոփոխություն:

	հաշվեկշռային (մնացորդային) արժեքը որոշվում է օտարվող հիմնական միջոցների թվի և օտարման օրն ընդգրկող տարվա սկզբի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի մեջ մտնող հիմնական միջոցների թվի հարաբերությունը բազմապատկելով օտարման օրն ընդգրկող տարվա սկզբի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքի հետ:»:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածով վերախմբագրվող՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ ա) 1-ին կետում «ընթացիկ ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ դրանց կատարման տարվա ընթացքում» բառերը, բ) 2-րդ կետում «կապիտալ բնույթի ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով» բառերը, գ) 3-րդ կետում «սպասարկման ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ դրանց կատարման տարվա ընթացքում» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 9-րդ հոդվածով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացվող նոր՝ 13.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ա) 1-ին կետում «ընթացիկ ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ դրանց կատարման տարվա ընթացքում» բառերը, բ) 2-րդ կետում «կապիտալ բնույթի ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով» բառերը, գ) 3-րդ կետում «սպասարկման ծախսերի չափով» բառերից հետո լրացնել «՝ դրանց կատարման տարվա ընթացքում» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում լրացվող նոր՝ «Ժե» և «Ժզ» ենթակետերում «բանկ կամ վարկային կազմակերպություն» բառերը	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	փոխարինել «բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն կամ ներդրումային ընկերություն» բառերով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն մասի կիրառության իմաստով, 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված, մշակված) ոչ ընթացիկ ակտիվների (բացառությամբ օտարման տարվա ընթացքում ձեռք բերված ոչ ընթացիկ ակտիվի) մնացորդային արժեքը որոշվում է օտարվող հիմնական միջոցների թվի և օտարման օրն ընդգրկող տարվա սկզբի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի մեջ մտնող հիմնական միջոցների թվի հարաբերությունը բազմապատկելով օտարման օրն ընդգրկող տարվա սկզբի դրությամբ ոչ ընթացիկ ակտիվների տվյալ խմբի հաշվեկշռային (մնացորդային) արժեքի հետ:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 21-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում` ա. «5-րդ և 6-րդ կետերով» բառերը փոխարինել «5-րդ կետով» բառերով, բ. «պարզեցված հարկի և (կամ) հաստատագրված վճարի» բառերը փոխարինել «շրջանառության հարկի, հաստատագրված վճարի և (կամ) արտոնագրային վճարի» բառերով.»,»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 22. Օրենքի 47¹-րդ հոդվածը` 1) ուժը կորցրած ճանաչել 3-րդ մասի երկրորդ նախադասությունը, 2) ուժը կորցրած ճանաչել:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 24-րդ և 25-րդ հոդվածներում կատարել խմբագրական բնույթի փոփոխություններ ու լրացումներ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի, 2-րդ և 3-րդ կետերի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է կարգավորել 2012 թվականի համար շահութահարկի հաշվարկ կամ շահութահարկի պարզեցված հաշվարկ ներկայացնելու հետ կապված անցումային հարաբերությունները:	Ընդունվել է:	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 30-րդ հոդվածում լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մաս. «5. 2013 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկ վճարող համարվող կազմակերպությունները 2012 թվականի հաշվետու տարվա համար շահութահարկի հաշվարկները կամ շահութահարկի պարզեցված հաշվարկները հարկային մարմին են ներկայացնում մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող կարգով ու ժամկետներում:»:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 30-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս. «6. Սույն օրենքի 20-րդ հոդվածի դրույթները վերաբերում են 2013 թվականի և հետագա հաշվետու տարիների համար ներկայացվող շահութահարկի հաշվարկներին:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			

Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասում ««Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերից առաջ լրացնել «Նոտարները և» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի լրացվող նոր 9-րդ մասում «վճարվող տոկոսների մասով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև այլ կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից թողարկված և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող գումարների մասով» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում «շրջանառության հարկով հարկվող գործունեության» բառերից հետո լրացնել «և նոտարական գործունեության» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծից հանել 2-րդ և 4-րդ հոդվածները:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
ՀՀ ԱԺ պատգամավոր Գ. Նուշիկյան	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ կետով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետում լրացվող նոր պարբերությունում «երեք» բառը փոխարինել «երկու» բառով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Հակոբյան	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ կետում կատարվող փոփոխությունը վերախմբագրել հետևյալ կերպ. «իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում՝ սեփականաշնորհման» բառերը փոխարինել «բաժնետիրական ընկերությունների, սահմանափակ	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	պատասխանատվությամբ ընկերությունների, կոոպերատիվների կանոնադրական կապիտալում անձին պատկանող բաժնետոմսերի, բաժնեմասերի և փայերի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի փոխանցումը» բառերով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածում կատարել խմբագրական փոփոխություններ և ֆիզիկական անձի կոմից հաշվարկների ներկայացմանը վերաբերող դրույթը տեղափոխել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի վերջին մաս, որպեսզի այդ դրույթը վերաբերի ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարում համարվող բոլոր գործարքներին:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) 9-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-րդ կետ. «9.1) պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.»,»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ կետով վերոխմբագրվող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետում «օտարերկրյա անձանց փոխարեն» բառերից հետո լրացնել «որպես հարկային գործակալ» բառերը, իսկ վերջին նախադասությունից հանել «ԱԱՀ-ն հաշվարկվում և պահվում է ապրանքի կամ ծառայության ընդհանուր արժեքից՝ ԱԱՀ-ի 16.67 տոկոս հաշվարկային դրույթա-չափով» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
	Դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:		
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	Առաջարկվում է նախագծով նախատեսել, որ հաշվետու տարվա որևէ ամսում ապրանքների, արտադրանքի, ծառայությունների և ակտիվների իրացումից հասույթի (զուտ հասույթի՝ առանց անուղղակի հարկերի) կամ «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ պատրաստի արտադրանքի, ապրանքների փաստացի պակասորդը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հայտնաբերվելու դեպքում պակասորդի նկատմամբ կիրառվում են օրենքով նախատեսված տուգանքներ, սակայն յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում ոչ ավել, քան մեկ անգամ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան լրացումներ:
--	--	---------------------	---